Պետրոս Դուրյան

Սիրեցի քեզ

Շաղի, շողի ժամք էին.
Վարդից հրդեհ կար յ՚երկին՝
Փոխան ամպոց հուր հյուսքի.
Տեղա՛ր մարգրիտ և ոսկի:

Թավուտքի մը խոր ծաղկոտ
Ընկողմանած նըվաղկոտ՝
Կը հևայիր դու տժգույն,
Ամրան սյուքի մը հանգույն:

Աչերդ սիրո Ատրուշա՛ն…
Եվ մատներովդ գերթ շուշան՝
Կը փետտեիր ծաղիկ մի,
Հառած շողից աչքդ երկնի:

Հիանայի թե ի՛նչպես
Փետտել թերթեր վարդին վես՝
Եվ թափթըփել քու գիրգ գիրկ
Կը զորեին մատներդ գիրգ:

Եվ նըվաղկոտ այդ աչեր
Նըշուլեին նո՛ր եթեր,
Եթեր մ՚աստեղց ուր փոխան

Հրաշեկ սլաքք կը շողան:

Ըրիր աչացդ մեկ կայծին
Եվ մեկ վանկիդ զ՝իս գերին,
Շղթայեցիր զ՝իս, անգո՛ւթ,
Նշույլներովն վեհ հոգվույդ:

Թող սիրտս, ինձմե գնա հեռի,
Չ՝ուզեմ հոգվույս թագուհի
Քեզ, որուն կուրծն վարդի թերթ,
Այլ կըրանիտ սիրտն է գեթ:

Դու, որ գիտես լոկ բուրել,
Գիրգ սրտերու վերք փորել,
Եվ կը սիրես, երբ կարի՛
Քեզ պաշտող սիրտն արյունի:

Թավուտքի մը շուք նըսեմ
Երբոր մենիկ արտասվեմ,
Հոն ես դու, կը գտնես զ՝իս,
Տերևներե՛ն կը խոսիս:

Երբ առվակին մեջ փաղփուն
Կ՝ուզեմ մոռնալ դեմքըդ, դուն
Դարձյալ հոն կը գտնես զ՝իս,
Ալիներե՛ն կը ժպտիս:

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Զախջախել սիրտս և քընար,
Հովին մեջեն միշտ մնչես՝
Թե դու բնավ զ՝իս սիրած չ՝ես:

Գրկեմ սրտովս արդ ցուրտ հող,

Ի՛ալ չը դիպիմ քեզի թող.
Կույս մ՚է նաև գերեզման…
Կա՞ խորունկ սիրտ մ՚անոր նման…

1869